

Ա. Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

Ե. ՕՏՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ա. ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Ե. Օտյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որի ամփոփման ու ուսումնասիրման ուղղությամբ տակավին առաջին քայլերն են կատարվում: Այդ ժառանգության մեջ առանձնակի տեղ են գրավում նրա մոտ 20 նամակները՝ ուղղված Ա. Չոպանյանին: (Տե՛ս գրականության և արվեստի թանգարան, Ս. Չոպանյանի ֆոնդ):

Նամակները հասարակական-քաղաքական և կենսագրական նշանակություն ունեն, օգնում են լրացնելու ու լուսար.անելու հեղինակի կենսագրության, աշխարհայացքի առանձին կողմերը: Գաղափար են տալիս տվյալ շրջանում նրան զբաղեցնող խնդիրների, դիտավորությունների ու ծրագրերի մասին: Դրանց մեջ հանդիպում ենք նաև ժամանակի մի շարք հուզող հարցերի պատասխաններ, տեղեկություններ ենք քաղում այս կամ այն անձնավորության, այս կամ այն դեպքի, տվյալ միջավայրի վերաբերյալ և այլն:

Առաջին նամակը գրված է Աթենքից, 1896 թ. հոկտեմբերի 1-ին: Օտյանը նույն թվականի օգոստոսի 14-ին փախել էր Պոլսից և ապաստանել Աթենքում. փախուստի պատճառը թուրքական ռեակցիայի հետապնդումն էր: Նա որպես «Հայրենիք» թերթի խմբագիրներից մեկը քաղաքականապես կասկածելի էր համարվում: Նրա ընկերները՝ «Հայրենիք»-ի գլխավոր խմբագիր Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը դեռևս 1896 թ. սկզբին անցել էին Լոնդոն: Թերթի տպագրությունը մեծ դժվարությամբ շարունակում էին իրականացնել Օտյանը և Հ. Շահնազարը: Շուտով ձերբակալվում է նաև Հ. Շահնազարը: Ֆրանսիական դեսպանատան աշխատակից Քուինեն, որը ապարդյուն ջանքեր էր գործադրում Շահնազարին ազատելու, մի անգամ Օտյանին ասում է՝

— Դուք ալ լավ կընէք ավելի երկար ատեն հոս շմնալով, որովհետև մալ նոդլ եղած եք և ի վերջո ձեզ ալ պիտի ձերբակալեն:

— Բայց ես հեղափոխական չեմ (այսինքն՝ դաշնակցական կամ հնչական): Հայտարարեցի, ինչ-որ բացարձակ ճշմարտություն էր, որովհետև կյանքիս մեջ ոչ հնչական և ոչ ալ դաշնակցական եղած եմ:

— Ձեր անունը իբրև կասկածելի արտասանվեցավ նախարարին կողմե, պնդեց Պ. Քուինեն, կխրատեմ, որ հոս շմնաքա՛ն:

Օտյանի փախուստը տեղի էր ունեցել Պոլսում դաշնակցականների կազմակերպած օսմանյան բանկի ցույցի օրը (օգոստոսի 14-ին): Ցույցին հետևել էր Պոլսի ջարդը և Օտյանը ջարդարարների ձեռքից մի կերպ ազատվելով, իրեն նետել էր ֆրանսիական «Սիտոն» նավը, ապա՝ տեղափոխվել «Ժիրոնդ» նավը և հասել Աթենք:

Աթենքի նավահանգիստն էին ապաստանել նաև ջարդից մազապուրծ բազմաթիվ նավահանգստային բանվորներ, բռնակիրներ, որոնցից շատերը կիսամերկ էին, որովհետև փախել էին հենց աշխատանքի վայրից:

Օտյանը և տեղական մի խումբ երիտասարդներ ստեղծել էին նպաստամատույց հանձնաժողով, որը զանազան ճանապարհներով միջոցներ էր ձեռք բերում, օգնում կարոտյալներին:

Որպես նպաստամատույց հանձնաժողովի ատենադպիր մի հայ քահանայի հետ Օտյանը դիմել էր Հունաստանի վարչապետ Տելիյանին, որը կարգադրել էր 50 զինվորական վրան հատկացնել՝ Ֆալերոյի դաշտում հայ փախստականներին պատսպարելու համար:

Հուլիսի ժողովուրդը այդ ժամանակ կարեկցանքով և համակրանքով էր վերաբերում հայերին: Զեյթունի հերոսական պաշտպանությունը հույների մեջ առաջ էր բերել ձգտում հայ և հույն ազատագրական շարժումը միավորելու, համագործակցելու: Այդ ձգտումը փոխադարձ էր, և Օտյանը մեկն էր այն հայ գործիչներից, որոնք ամեն կերպ աշխատում էին դարկ տալ, նպաստ-

¹ Mal neud — չար կապ, չարություն անոթ:

² Տե՛ս Ե. Օտյան, Երկեր, հ. IV, էջ 61—62:

տել ժողովուրդների եղբայրությանն ու համագործակցությանը: Նրա առաջին և չեղարկված մի քանի նամակները նվիրված են այս խնդրին:

Աթենք հասնող փախստականների մեջ էր նաև այդ ժամանակի ականավոր հրապարակախոսներից մեկը, ֆրանսիական «Ռեվյու դե Ռևյու» հանդեսի աշխատակից Տիգրան Երկաթը: Օտյանը և նրա ընկերները օգտվելով Տիգրան Երկաթի ներկայությունից, կազմակերպել էին մի դասախոսություն հույն և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության մասին: Տիգրան Երկաթի այդ դասախոսությունը³ (ֆրանսերեն) մեծ ուշադրությամբ լսվել էր Աթենքի մտավորականության կողմից: Նամակում Օտյանը հայտնում է, որ Տ. Երկաթի ճառը Աթենքում մեծ հետաքրքրություն էր առաջ բերել, մանավանդ, որ նա կանգ էր առել ոչ միայն անցյալի, այլև ապագայի վրա. «հոսսեցավ նաև այն դաշնակցության վրա, զոր հայերը կրնան կազմել հունաց հետ, երբ անկախ ըլլան»:

Նրա ճառը բոլոր օրաթերթերը թարգմանել և հրատարակել էին հունարեն, Տ. Երկաթին Պառնասի պատվավոր անդամ էին ընտրել:

Մենք չենք կասկածում, որ Տ. Երկաթի այդ դասախոսության հիմնական դրույթների մշակման մեջ իր մասնակցությունն է ունեցել նաև Օտյանը, մանավանդ դասախոսության գաղափարը նա է տվել:

Տիգրան Երկաթի դասախոսությունը, ինչպես Չոպանյանն է գրել, կազմված էր մեծ տակտով: Նա հաշվի էր առել, թե ժողովուրդների մերձեցման գործում որքան նշանակալից է կրոնի խնդիրը: Ուստի դասախոսության մեջ հանգամանորեն կանգ է առել այդ խնդրի վրա, ցույց է տվել, որ հայկական լուսավորչական և հունական եկեղեցիների միջև էական տարբերություններ չկան: Ուստի այդ երկու ժողովուրդները կրոնով կարող էին միանալ, որը անհրաժեշտ էր չեղարկված պայմաններում միության համար: «Մեր երկու ազգերը համանման շահեր, սովորություններ ու հղացումներ ունենալով, իրենց ազգային եկեղեցիները պետք է որ զիրար փոխադարձաբար նանչնան, ինչպես որ եղավ միջին դարում»:

Ուշագրավն այն է, որ նա հայտնում է, թե դա սոսկ իր անձնական կարծիքը չէ, այլ հույն և հայ ժողովուրդների ձգտումն է. «Հույն բարեկամներ խանդավառությամբ զայն ինծի ներկայացրեցին», — ասում է նա: Այդ ձգտումը իր արտահայտությունն էր գտել դեռևս Ներսես Վարժապետյան պատրիարքի օրոք և հենց ինքը, Ներսեսը իր ժամանակին զգալի աշխատանք էր տարել այդ ուղղությամբ: Քննելով հունական կրոնական գրքերը և տեսնելով, որ «երկու դավանանքներում միջև իբր տարբերություն» միայն «սնոտություններ» կան, Ներսեսը «կոնդակ մը հրատարակեց, որով կարտոններ հայերուն, որ հույն եկեղեցիներուն մեջ մկրտվին ու պսակվին այն ամեն տեղերը, ուր հայ քահանա չգտնեն: Եկեղեցիին միությունն էր, որ կիրառործվեր»:

Սակայն թուրքական կառավարությունը, որը հետևում էր «Բաթանիր, որ տիրես» սկզբունքին, չէր կարող հաշտ աչքով նայել նման միությունների վրա և «փութաց զայն ջնջել Ներսեսի հրաժարումն անմիջապես հետո»:

Դասախոսությունը Տ. Երկաթը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Դուք ալ, մենք ալ այսօր շատ հստակ կերպով կտեսնենք մեր երկու ազգերուն բնական շփման կետերը: Ներսեսի ձեռնարկը կմնա իբրև մեծաշուք արտահայտություն մը մեր մտածող դասակարգին ու մեր կղերին ժողովրդին մեկ ստվար մասին ձգտումներուն: Թե ատի մոտ ատենեն վերստին պիտի փորձվի և հաջողվի, այս մասին տարակույս չունինք, որովհետև մեր ազգը այս գործին հաջողմանը համար իր կամքին բավականաչափ մեծ բաժինը հատկացուցած է:

Մեր քաղաքական ու կրոնական անցյալ բաժանումները մեզի որեւէ ցավի զգացում ներշնչելու չեն: Ընդհակառակն, մեզ երջանիկ համարելու ենք, որ կրնանք մեր բռնելիք արդի ընթացքին համար այսքան համոզիչ դասերն օգտվիլ»:

Հաջորդ նամակից (31 հոկտ. 96 թ.) իմանում ենք, որ Օտյանը որոշել էր Տ. Երկաթի ճառը թարգմանել և հրատարակել հայերեն: Նա այդ ժամանակ աշխատում էր իբրև «Միություն» ամսաթերթի խմբագիր: Ամսաթերթն ուներ իր տպարանը, որը սակայն անկանոն վիճակում էր. շատ տառեր պակասում էին: Հիշյալ նամակում նա հայտնում է. «հենց որ տպարանը կանոնավորվեց թերթն ղուրս հրատարակություններ պիտի ընե», առաջին հերթին, հրատարակելու է Տ. Երկաթի դասախոսությունը, «հետո հունական հեղափոխության մեկ պատմությունը մաս առ մաս և պատկերազարդ և հետո գուցե և գիրք մը որուն մեջ պիտի հավաքեմ մեկ քանի տպավորություններ: Շիտակը շատ սիրեցի Աթենքը և Հունաստանը...»:

³ Տ. Երկաթի դասախոսության հայերեն թարգմ. տե՛ս «Անահիտ», Փարիզ, 1899, № 3, 1900, № 4, 5:

Օտյանը իր մտադրությունը չկարողացավ իրագործել, որովհետև տպարանը չկանոնավորվեց և նա 1897 թ. սկզբին տեղափոխվեց Նգիպտոս Բայց, ինչպես երևում է այս նամակից ու հուշագրություններից, նա հանգամանորեն ուսումնասիրել էր հունական հեղափոխության պատմությունը։ Դրանից երկու տարի հետո գրած «Արյունոտ հիշատակներ»-ի մեջ, հիացմունքով է խոսում հունական ազգային-ազատագրական շարժման հերոս Գանարիսի մասին, որը կազմակերպել էր բարա կղզու դիմադրական շարժումը ընդդեմ թուրք ջարդարարների։

Խեն Հունաստանը 1830 թ. անկախություն էր ձեռք բերել, բայց հունական հողերի մի զգալի մասը (Կրետեն, Մակեդոնիան և այլն) գտնվում էր թուրքերի տիրապետության տակ։ 1897 թ. սկզբին Կրետեում ապստամբություն բռնկվեց ընդդեմ Թուրքիայի Ապստամբությանը մասնակցում էին նաև հայեր, մեծ մասամբ Աթինյում ապաստանած հայերից։ Կասկած չկա, որ այդ գործում ևս Օտյանը իր մասնակցությունն էր ունեցել։

Այդ շրջանում գրած նրա մի քանի պատմվածքներում («Հաշտություն», «Աղոթքը») հայ հերոսները զենք են վերցնում և գնում միանում են ապստամբ հույներին, նրանց շարքերում կռվում են ընդհանուր թշնամու՝ Թուրքիայի դեմ։ Օտյանի մասին խոսելիս որոշ մարդիկ գործը այնպես են պատկերացնում, որ իրր թե նա դեմ է եղել ազգային-ազատագրական պայքարին։ Սակայն, իրականում, Օտյանը դեմ է եղել ոչ թե ազգային-ազատագրական պայքարին՝ ընդդեմ Թուրքիայի, այլ պայքարի այն եղանակին, որին հետևում էին հայ քաղաքական որոշ խմբավորումներ։ Նա դեմ էր բուլիների կոնգրեսից հետո մեծ տերությունների և ցարիզմի վրա հենվելու քաղաքականությանը, դեմ էր մեծ տերությունների միջամտությանը հայկական հարցին, որովհետև նրանք միայն իրենց քաղաքական ու տնտեսական շահերն էին հետապնդում և հայ ժողովրդի արյան գնով սուլթանից նորանոր զիջումներ ձեռք բերում։ Նրանցից ոչ մեկը չհազարգաված չէր Արևմտահայաստանի ազատագրության խնդրով։ Նույնիսկ ցարական կառավարությունը, որ մինչև Բուլիների կոնգրեսը հովանավորում էր հայերին, Բուլիների կոնգրեսից հետո Լոբանով-Ռոստոփսկու բերանով հայտարարում էր, թե «Հայաստանը մեզ պետք է առանց հայերի»։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ ցարիզմը, ինչպես ասում էր Լոբանով-Ռոստոփսկին, չէր ցանկանում արևմտահայերին ազատագրելով «հայկական թագավորության կենտրոն» ստեղծել, Արևելահայաստանից ևս զրկվելու։ Արևմտահայերի ազատագրական շարժումները ևս, որոնց մասնակցում էին նաև արևելահայերը, անհանգստություն էին պատճառում ցարիզմին։

Ցարիզմը զգում էր, որ այդ շարժումները «վատ» օրինակ կարող էին ծառայել իր լծի տակ ընշված ժողովուրդների և իր սեփական ժողովրդի համար։ Լոբանով-Ռոստոփսկին հայտարարում էր, որ «եթե Թուրքիոյ բոլոր քրիստոնյաներու համար բարեկարգություն կուզվի, ինքն էլ համամիտ է, իսկ եթե հայոց համար բացառիկ արտոնություններ կուզվին, որ ապագայում հայկական թագավորության կենտրոն մը դարձնեն (այսինքն՝ մեծ տերությունները) ինքը ազոր դեմ է։ Ռուսիո կողքին երկրորդ Պուլիարիա մը ստեղծել չուզեր։ Ցարը և ինքը սուլթանին վրա ճշնշում դործածելու հակառակ են»⁴։

Այս պարագայում Օտյանը անմտություն էր համարում մեծ տերությունների ու ցարիզմի օգնության ու միջամտության վրա հույս դնելը։

Օտյանը առաջ էր քաշում Թուրքիայի ճնշված ժողովուրդների հեղափոխական համագործակցության, համատեղ պայքարի խնդիրը։ Նա 1896—1897 թթ. առանձնապես մեծ նշանակություն էր տալիս հայերի ու հույների համագործակցությանը։ Նույնիսկ Նգիպտոս տեղափոխվելով, նա սրտատրոփ հետևում էր Կրետեի ապստամբության ընթացքին, մեծ հույսեր կապում նրա հաղթանակի հետ։ 1897 թ. մայիսին հույները մի քանի անհաջողություններ ունեցան, այդ առթիվ Օտյանը 1897 թ. հունիսի 7-ի նամակում գրում է. «Հույները եթե նորանոր պարտություններ ևս կրեն և ամոթալի հաշտություն մը կնքեն, մեր գործը տարիներու համար ևս պիտի մնա Բայց ևս հույս ունեմ դեռ իրենց վրա»։

Պայքարի այս ուղին, որ դեռ իր ժամանակին մատնանշել էր Մ. Նալբանդյանը, միակ հուսալի ուղին էր և արևմտահայ ժողովուրդը տարերայնորեն դեպի այդ ուղին էր ձգտում։ Նա չէր մոռացել Նալբանդյանի հեղինակյա արտահայտությունը մեծ տերությունների հասցեին՝ «կեցցե՛ կատուն, որ իր փորի համար մուկ է որսում»։

Արևմտահայ ժողովրդի լավագույն զավակներից մեկը՝ Հ. Պարոնյանը երբեմն հայ աբկա-

⁴ Տե՛ս Կ. Թ ու մ ա յ ա ն, Պատմություն արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի, Լոնդոն, 1905 թ., հ. Բ, էջ 556։

ծախնդիրներին հիշեցնում էր նախանդյանի այդ խոսքերը՝ և ցույց էր տալիս, թե եվրոպական մեծ կատուների միջամտությունից հայ ժողովուրդը ինչ շոշափելի «օգուտ» էր ունեցել։ «Եթե այս օգուտներուն հրեականներ մեկ դի նետելով իրականին դառնանք, սա օգուտը կտեսնենք, որ առաջ գալուստն ունի, եթե տարին հարյուր հոգի կսպանեն, այսօր հազար կսպանեն և այս ալ մեծ օգուտ է անշուշտ անոնց, որոնք բազմութենէ չեն ախորժիր»⁵։ Ուտյանը ևս չէր մոռացել նախանդյանի հիշյալ արտահայտությունը և մեծ տերությունների գումարած կոնգրեսները (վեհաժողով) կոչում էր «կատուներու վեհաժողով»։

Այդ տարիներին գրած «Լեոնի բանտը» ակնարկում նկատարելով Կիլիկիայի վերջին թագավոր Լեոն 6-րդի լքված վիճակը, եվրոպական արքունիքների առջև տարիներով քարշ գալը, իրեն ու իր երկրի համար «օգնություն ու պաշտպանություն մտրալը», բայց միայն սուտ խոստումներ ստանալը, Ուտյանը ավելացնում էր. «Իր կյանքը մեր ամբողջ պատմությունը չէ՞»։ Նա ականարկը վերացրել է հայ ժողովրդի կեղծ բարեկամների՝ եվրոպական մեծ տերությունների դեմ ուղղված աստվածության ու զայրույթի խոսքերով։

Սակայն Ուտյանը մենակ չէր։ Եվրոպական մեծ տերությունների հանդեպ բուռն աստվածություն ու զայրույթ է արտահայտել նաև Երուսաղեմ, որը իր՝ «Հայ կամավորները հելլենական վերջին պատերազմի մեջ» շատ նշանավոր, բայց ցարդ չեկատված ակնարկում, մեծ խանդավառությամբ նկարագրել է, թե ինչպես հայերը կամավոր կերպով մասնակցում էին Կրետեի ապստամբությանը։

Շատ ուղադրավ է Երուսաղեմի զրույցը ապստամբության հույն ղեկավարներից մեկի հետ։ Վերջինս նրան հարցնում է. «Ինչու չեք շարժիր, առիթն է, մեզի օգնելով դուք ալ կօգտվիք»։

— Ինչպես կհամարձակիք այս խոսքերն ինձի, հայու մը ուղղել,— պատասխանում է Երուսաղեմից հայտնի իմաստասեր, երբ մենք ոտքի ելանք, երբ ամբողջ աշխարհը պահ մի շվարած էր, երբ Զեյթունը կը մոնչեր անընկճելի, երբ Պոլիս տակն ու վրա էր, երբ Տաճկաստանը վերջին շունչը փչելու կետին լերինք, դուք ինչ կնեիք, Կրետեն ինչու չշարժեցավ, Մակեդոնիան ինչու չարթնացավ, Ինչու, ինչու։ Զգեցիք որ մեզ բզկտեն, ձգեցիք, որ թևերնիս կտրատեն ու հիմա մեր ձեռքերը կփնտրեք։ Ան գլուխը ծռեց...

Մտածեցի, որ նույն ճակատագիրը, նույն լուծը կրած են մեր երկու հայրենիքները։ Վրեժնիս հագեցնելու համար սև, ահեղի մարգարեություններ ըրինք եվրոպայի վրա։ Արյունը արյուն կուզե, մոտ ապագային մեջ անոնք ալ գիրար պիտի բզկտեն...

Մեր անեծքը անոնց գլխուն վրա թող ծանրանա. վայ, վայ, անոնց գլխուն։ Եկող անգամվան, տասը տարին, ո՞վ գիտե երբ, մոտ կամ հեռու ապագայի մեջ, խրատված այս սոսկալի դասեն, ճիգերնիս միացուցած նորեն ոտքի կելանք ձեռք-ձեռքի տված։

Զիրար գրկեցինք ու բաժանվեցինք։ Եկող անգամվան...»⁶։ Այդպես էր դրությունը նաև Արևելահայաստանում։ Այդ շրջանի մեր նշանավոր գրողները՝ Նույնիսկ Ռ. Պատկանյանն ու Բաֆֆին, որոնք մինչև Բեռլինի վեհաժողովը հույսեր էին կապում մեծ տերությունների ու ցարիզմի օգնության ու օժանդակության հետ, Բեռլինի վեհաժողովից հետո հիասթափվել և անեծքով էին հիշում նրանց մասին։

Վաթսուն ու մեկ հոգված՝ դու Հայաստան
խղղեցիր իսպառ,
Հայի սիրտն ու հոգին անխոս արիր
պատառ-պատառ...

Գիտե՞մ խեղճ հային շին տալ Հայաստան,
Մեզ ազգ կաղմելու ամենքն են խափան։—

Երևի է Պատկանյանը 1879 թվականին։ Ուտյանը միանման արհամարհանքով ու ծաղրով էր վերաբերում այն բոլոր հայերին, որոնք Բեկուղ շնչին չափով հույս էին կապում մեծ տերությունների հետ։

Սակայն մեծ տերությունների հանդեպ եղած վստահությունն այդ ժամանակ այնքան մեծ էր, որ Ուտյանի ընկերներից շատերը՝ Արփիարյանը, Զոպանյանը և ուրիշներ համոզված էին, որ հայկական հարցը շուտով կկարգադրվեր և բոլորը նորից Պոլիս կվերադառնային։ Արտասովոր լավատեսությամբ առանձնապես աչքի է ընկել Արփիարյանը։ Ուտյանն իր հիշողությունների մեջ

5 Տե՛ս Է. Պատկանյան, Ընտիր երկեր, հ. 1, էջ 197։

6 Նույն տեղում, էջ 197։

7 Տե՛ս «Նոր կյանք», Լոնդոն, 1899, № 23։

8 «Անահիտ», Փարիզ, 1898 թ., № 6։

պատմում է, որ երբ Արփիարյանի հղբայր Տիգրանը հայրենաբազմությունից տառապելով վերադառնում է Պոլիս (1898 թ.), Արփիարյանը ասում է. «Խենթ ապուշը չկրցավ մեկ քանի ամիս ալ համբերել, որպեսզի ամեն բան կարգադրվեր ու ամենքս միասին Պոլիս դառնայինք»⁹:

Զուպանյանը ևս նման հավատք ուներ մեծ տերությունների հանդեպ: Երբ 90-ական թվականների վերջերից Քուրքիայում ուժեղացավ գերմանական ազդեցությունը, Արփիարյանը, Զուպանյանը և ուրիշները կարծում էին, որ Գերմանիան օգտագործելով իր դիրքը, պիտի լուծում տար հայկական հարցին: Ահա այդ առթիվ պատասխանելով Զուպանյանին, Օտյանը հետևյալ նշանակալից տողերն է գրել. «Գերմանական ազդեցությունը երազ մըն է, որ Արփիարի պես համառ լավատեսները կրնան միայն ունենալ: Եզրիպտոսի մեջ իսկ մահմեդականները թրքական հաղթանակներին գինովցած քրիստոնյաներուն դեմ ցույցեր ընել սկսան, ուր մնաց Տաճկաստանի մեջ» (1897 թ. մայիսի 27-ի նամակ): Նույն այդ թերահավատությունը տեսնում ենք նաև դրանից առաջ՝ 1897 թ. մայիսի 7-ի գրած նամակում: Դրվատելով Զուպանյանին հայերի օգտին արևասահմանում եռանդուն պրոպագանդա մղելու համար, նա ավելացնում է. «Անկեղծորեն կրնամ բռնել, որ մեր մեջքն ամենեն օգտակար գործը դուն կրնես արտասահմանի մեջ: Բսկ գալով այս աշխատություններու արդյունքին, ավաղ, հիմակու հիմա բան մը չը հուսացվիր»:

1896 թ. չարդերից հետո Աբդուլ Համիդը համաշխարհային հասարակական կարծիքի մեղման տակ մեղմացրել էր հայերի նկատմամբ գործադրվող հալածանքները: Օտյանը հասկանում էր, որ դա ժամանակավոր երևույթ է, և քանի գոյություն ունեն թուրքական ռեակցիան, սուլթանի դմբը, չարդերը անխուսափելի էին. «Պետք չէ, բնավ վստահիլ հայերու մասին այժմ ցույց տրված թույլտվության,— գրում է նույն 1897 թ. մայիսի 27-ի թվակիր նամակում,— մինչև որ սուլթան Համիդ շատակի, ապահովություն չէ Պոլիս դառնալ և անկարելի է հոն օգտակար գործ մը ընել»:

Անդրադառնալով հայ ազգայնական որոշ խմբերի արկածախնդրական գործողություններին, ավելացնում է. «Միշտ ցույցեր ընելու հիմարական ծրագիրներ կմշակվին հոս ու հոն և երբ մտածենք թե քանի մը հարյուր ոսկի և հինգ, տասը մարդ բավական է ամբողջ Պոլսո մեջ տակն ու վրայություն մը առաջ բերելու... ալ ուր կմեա հիմիկվան առերևույթ հանդարտությունը» (նույն տեղում):

1898 թ. գրած «Արյունոտ հիշատակներ»-ի մեջ, հիշելով 1896 թ. օգոստոսի 14-ի «դրոշակալաններ» կազմակերպած ցույցի մասին, գրել է. «Դրոշակալանները սկզբից ի վեր շատ վստահություն և համակրանք չէին ներշնչած ինձի և այնպես կենթադրելի, որ իրենց կողմն տեղի ունենալիք հեղափոխական փորձերը միշտ անհաջողության և վիժումի դատապարտվելու հավանականություն ունենալու»¹⁰:

Ահա թե ինչու դաշնակցականները նրան արդեն երկու անգամ ահաբեկման էին ենթարկել. առաջին անգամ 1895 թ., երկրորդ անգամ 1898 թ. Եզրիպտոսում եղած ժամանակ: Այս դեպքին է նվիրել նա իր 1898 թ. սեպտեմբերի 16-ի նամակը: 1898 թ., երբ նախկին հնչակյան Հ. Ծանկույանը բանտից ազատվելով գնում է Եզրիպտոս և այստեղ հրատարակում «Դիմակավորներ» բրոշյուրը, ուր անհիմն կերպով մեղադրում է նաև Օտյանի եղբորը, այդ առթիվ Օտյանը նրանից բացատրություն է պահանջում: Թեթև ընդհարումից հետո նրանք բաժանվում են: Բայց Ճանկույանը, որ այդ ժամանակ արդեն հարում էր դաշնակցությանը, նույն օրը, երեկոյան, երկու ուրիշ դաշնակցականի հետ հարձակվում է Օտյանի վրա և վերջինս ազատվում է միայն իրեն ուղեկցող մի բարեկամի օգնության շնորհիվ:

Այդ ժամանակի քաղաքական կուսակցություններից Օտյանին զբաղեցրել է նաև Երիտասարդ թուրքերի կուսակցությունը, որի հանդեպ առհասարակ խիստ վերապահ է եղել: Խոսելով այն մասին, որ Պոլսում տիրող խաղաղությունը ամեն բույս կարող էր վրդովվել հայ ազգայնական կուսակցությունների արկածախնդրական գործողությունների հետևանքով, նա գտնում էր, որ նման դեր կարող էին կատարել նաև երիտասարդ թուրքերի շարժումները: «Հայերեն դուրս կան jeune turk»¹¹-երը, որոնք բավական զորություն մը սկսած են կազմել, գոնե Եզրիպտոսի մեջ և հավանական է, որ խաղաղությունն ևս չեն սկսին ավելի գործնական միջոցներու դիմել:

Նա թեև մինչև հիմա կարևորություն չէի տված իրենց, բայց հոս ավելի մոտեն ծանոթանալով իրենց գլխավորներու հետ կսկսիմ կոր հավատք ունենալ քիչ մը վրանին (տե՛ս 1897 թ. մայիսի 27-ի նամակը):

⁹ Տե՛ս Կ. Օ տյան, Երկեր, հ. IV, էջ 144:

¹⁰ Տե՛ս «Նոր կյանք», Լոնդոն, 1898 թ., № 1:

¹¹ Jeune turk—երիտասարդ թուրքերը:

Օտյանի նամակները շատ արժեքավոր տեղեկություններ են պարունակում հեղինակի կենսագրության վերաբերյալ:

Աթենքից գրած 1896 թ. հոկտեմբերի 31-ի նամակից իմանում ենք, որ Օտյանը տարագրության մեջ ևս դադարում էր իր սիրած արևմտահայ բանաստեղծներով՝ Դուրյանով ու Պեշիկ-Քաշյանով: Նույնիսկ Դուրյանի «Սև հողեր»-ը թարգմանել էր՝ հավանորեն ֆրանսերեն: Զոպանյանը նրանից խնդրել էր Դուրյանի ու Պեշիկ-Քաշյանի երկերի ժողովածուները, այդ առթիվ Օտյանը գրում է. «Ինձ կուղիս Դուրյանի և Պեշիկ-Քաշյանի հատորները, սակայն դժբախտաբար չպիտի կրնամ գտնել և ուղարկել քեզի. ասկի առաջ Դուրյան մը ձեռք անցուցի ժամանակի մը համար, բայց «Սև հողերուն» թարգմանությունը լրացնելն հոբբը վերադարձուցի»:

Հարուստ տեղեկություններ կան նաև 27 մայիսի, 1897 թվակիր նամակում՝ գրված Շարապասի ազարակից: Այդ ազարակը գտնվում էր Կահիրեից մոտ 7 ժամվա հեռավորության վրա: Դա բամբակի մշակության հատկացված ընդարձակ դաշտ էր: Օտյանը այստեղ աշխատում էր իբրև հաշվապահ և գանձապահ: Ազարակում կային նաև մի քանի ուրիշ պաշտոնյաներ՝ մի չվեյցարացի ագրոնոմ՝ իր կնոջ հետ և վարձու ֆելլահներ: Իր մեկուսացած, անհրապույր կյանքի մասին հիշյալ նամակում գրում է. «Դիշերը տուն կը քաշվիմ, դուռս կը կղպեմ ու կպառկիմ, շորս կողմս մողեսներով, մուկերով, Gasard¹²-ներով և երբեմն ոձերով շրջապատված»: «Դիշերը ընդհանրապես գրելով կանցնեմ մինչև ժամը տասը: Նախ, նամակներ, հետո «Միություն» հոդված, որովհետև միշտ ես եմ խմբագրապետը և հետո տնտրակ մը, որուն մեջ պատմած եմ իմ Պոլսեն մեկնելուս և Իրեհ հասնելուս վեցօրյա անցքերը և բավական հետաքրքրական է...

Անոնցմե հատ հիմա հոդվածներ կը գրեմ նաև «Փարոս»-ին»¹³:

Ակնարկած տնտրակը նրա «Արյունոտ հիշատակներ»-ն է, որը լույս տեսավ 1898 թ. Լոնդոնի «Նոր կյանք»-ում:

Խոսելով իր գրական ծրագրերի մասին, նա հայտնում է, որ մտադիր է «ուսումնասիրություն մը ընելու — քրիստոնեության երեսեն հայոց կրած վնասներուն վրա և ցույց տալու, թե «եկեղեցին մինչև հիմա պահպանած է» ավանդական խոսքը, տնտրերններուն կողմն հնարված ձեռք բանաձև մըն է»:

Այս ուղագրով աշխատության ճակատագիրը մեզ հայտնի չէ: Սակայն նրա հիմնական գաղափարը Օտյանը հետագայում արտահայտել է իր մի շարք հակակրոնական գրվածքներում: Նամակից պարզվում է նաև, որ Օտյանը մտադիր է եղել Բուլղարիա մեկնել և ուսուցչությամբ զբաղվել: «Միտք շունիմ կյանքս Շարապասի ազարակին մեջ անցնելու եթե լավագույն բան մը չգրտնամ ընելիք, կամ նորեն Աթենք պիտի վերադառնամ և շենք շնորհք «Միությունը» շարունակեմ, կամ Պուլկարիա պիտի երթամ ուր զիս իբրև դասատու ուղած էին արդեն Աթենք գտնված միջոցիս»:

Նա Բուլղարիա չգնաց, հավանաբար, այն պատճառով, որ 1898 թ. Լ. Բաշալյանի խմբագրությամբ ու Արփիարյանի սշխատակցությամբ սկսեց լույս տեսնել «Նոր կյանք»-ը և Օտյանը լավ համարեց գնալ Լոնդոն՝ միանալ իր ընկերներին:

Շարապասից գրած Ե. Օտյանի նամակներից իմանում ենք, որ Լեոն իբր թե նրան հանձնարարել էր գրել Գր. Օտյանի կենսագրությունը: Հերթելով այդ լուրը, նամակում ասվում է. «Ինձի համար ավելի պատշաճ կեկատեմ Նուպար փաշայի կենսագրությունը գրել, որուն մասին կրնամ հոս շատ տեղեկություններ հավաքել» (1897 թ. նոյեմբերի 2-ի նամակը):

Այս ծրագիրը նա հետագայում հրազործել է նրանով, որ 1912—1913 թթ. հրատարակած «12 տարի Պոլսեն դուրս» աշխատության վերջին գլուխներից մեկը նվիրել է Նուպար փաշայի դործունեությանը («Եգիպտահայ երեկիները»): Բացի դրանից 1913 թ. հրատարակած «Պողոս Նուպար փաշան և Հայկական հարցը» ուսումնասիրության մեջ ևս մեծ տեղ է հատկացրել Նուպար փաշային: Վերոհիշյալ նամակից իմանում ենք, որ Օտյանը այնուամենայնիվ կտրված չէր հասարակական կյանքից: Նա այդ օրերին Կահիրեի «Ընթերցասիրաց լսարանի» համար մի դասախոսություն էր կարդացել «Ժողովողի գրքի վրա»: Աստվածաշնչի այդ գիրքը իր քննադատական ոգու շնորհիվ շատ է զբաղեցրել Օտյանին: Իր հետազոտությունների արդյունքները նա հրատարակեց 1905 թ. հեղափոխության օրերին «Սուսումնասիրություն Ժողովողի վրա» խորագրով, որը մեր հակակրոնական գրականության լավագույն էջերից մեկն է:

¹² Խավարարգեզ, таракан:

¹³ Ենօրյա լրագիր (1896—1902 թթ.), լույս էր տեսնում Կահիրեում, Հ. Արփիարի ու Տ. Արփիարյանի խմբագրությամբ:

1898 թ. հունվարի 6-ի նամակից իմանում ենք, որ Օտյանը անտարբեր չի հղիլ նաև պ. Կ. Կիսայի հանդեպ. «նույնիսկ սիրահարական ոտանավոր մը հրատարակեցի «Փարոս»-ի մեջ: Բայց չեմ համարձակիր բանաստեղծի մը զրկել ատիկա»:

1898 թ. Ա. Չոպանյանը Փարիզում սկսում է հրատարակել «Անահիտ» հանդեսը և Օտյանին ևս հրավիրում է աշխատակցելու, որը նա սիրով է ընդունում: «Անահիտ»-ին մեջ գրելու հրավերը երբեք կրնա ընդունվել և պիտի ջանամ նույնիսկ առաջին թվին համար բան մը հասցնել: Ըտածեցի, որ նամակի ձև տամ հողվածներուս, և ընդհանուր վերնագրի մը տակ գրեմ... Այս կերպով կրնամ ուզածս նյութերու վրա ուզած ոճովս գրել: Այդ շրջանից սկսած Օտյանը հռանդուն կերպով աշխատակցում է «Անահիտին»: Դա տեսնում է մինչև 1901 թվականը, երբ նա սուր տարածայնություններ ունենալով Չոպանյանի հետ, ընդհարվելով, ընդմիջտ բաժանվում է «Անահիտից» և կիսատ է թողնում իր լավագույն վեպերից մեկը՝ «Գործի մարդիկ»-ը, որ տպագրվում էր «Անահիտ»-ում: Ընդհարումը տեղի էր ունեցել Ա. Արփիարյանի պատճառով. Չոպանյանը միացել էր Արփիարի կուսակցական հակառակորդներին և բուռն պայքար էր սկսել նրա դեմ: Այդ պայքարին սկզբում արձագանքեց նաև Ե. Օտյանը՝ հույս ունենալով Արփիարին հեռացնել կուսակցական գործունեությունից: Բայց տեսնելով, որ Չոպանյանը և մյուսները ավելի հեռուն էին ուզում գնալ, նա անցավ Արփիարի կողմը և սկսեց պայքարել Չոպանյանի ու մյուսների դեմ:

Նրա ակնարկները, հողվածներն ու պատմվածքները «Անահիտում» նախ լույս էին տեսնում «Անապատեն ձայն», իսկ հետո, «Սոսապ լեսիմ» խորագրերի տակ:

1898 թ. հոկտեմբերի 5-ի նամակից երևում է Օտյանի ջիգր սերը հայ ժողովրդական ու աշուղական երգերի նկատմամբ: Երապաստում ստանալով «Revue Encyclopetique»¹⁴-ը Ա. Չոպանյանի հողվածով, այդ առթիվ հետևյալ ուշագրով դիտողություններն է անում. «Պետք էա՝ ըսելու, որ զրածող կատարյալ բան մըն էր. Ինչո՞ւ համար սակայն աշուղներուն վրա թիչ մը ավելի չէիր խոսեր ու հատվածներ թարգմաներ, մանավանդ չէիր կրնար թարգմանել այս առթիվ պանդուխտին երգը «Կոռնեկ ուստի կուզաս» հայոց միակ ժողովրդական երգը»:

Օտյանի վերջին նամակը Շարապասից գրված է 1898 թ. նոյեմբերի 16-ին: 1898 թ. վերջերին նա տեղափոխվում է Փարիզ. միսոոքամանակ անգործ մնալուց հետո, Չոպանյանի օժանդակությամբ աշխատանք է ստանում ուսմինահայ Անդրոնիկ Յանեսկոյի մոտ: Վերջինս կազմում էր տարօրինակ մի բառարան՝ նպատակ ունենալով ապացուցել, որ աշխարհի բոլոր լեզուները ծագել են հայերենից: Նրա հայերենի «մայրությունը» ապացուցվել, մեծ տերությունները պիտի ջանային հայերին ինքնավարություն տալու և այդ կերպ «կլուծվել» հայկական հարցը:

Օտյանը Յանեսկոյի հետ տեղափոխվում է Վիեննա՝ որպես քարտուղար աշխատում է նրա բառարանի պատրաստման վրա: Այդ գործը նա համարում էր խենթություն և ակամայից էր զբաղվում դրանով: Վիեննայից գրած նամակները մեծ մասամբ վերաբերում են իր անհրապույր, անմիտ աշխատանքին, Յանեսկոյի խենթություններին: Նա վախենում է, որ Յանեսկոյի հետ ապրելով ու աշխատելով, ինքն էլ պիտի խենթանար, որովհետև ստիպված էր առավոտից մինչև իրիկուն տանից դուրս չգալ և միայն բառարանով զբաղվել: «Եթե ամիսն մը չխենթանամ, ըսել է թե արդեն խենթ եմ», — գրում է 1899 թ. հոկտեմբերի 11-ի նամակում: «Վերջին անգամ կարդացած լրագիրս է *Matin*-ը՝ հոր Բարիդեն մեկնած ատենս առի, անկե ի վեր չեմ գիտեր ինչ անցած դարձած է աշխարհի երեսը»: Նամակից երևում է, որ նա սկսել էր «նոթեր» գրի առնել Յանեսկոյի մասին: Այդ նոթերի հիման վրա հետագայում՝ իր «12 տարի Պոլսեն դուրս» նշանավոր հուշագրությունների մեջ ստեղծեց Յանեսկոյի՝ ավելի մղումներ ունեցող, բայց կեղծ գաղափարներով տարված «գիտնականի», կամ հայ ֆիլիստեֆի երգիծական հիանալի կերպարը:

1899 թ. նոյեմբերի 13-ի թվակիր նամակը Օտյանն արդեն գրում է Հոնդոնից: Սա երևի Հոնդոնից Չոպանյանին գրած առաջին նամակն է: Այստեղ նա կատակով գանգատվում է Արփիարից, որը արսենթի փոխարեն (անգլ. օղի) ստիպում էր նրան կաթ խմել: «...Գարիտային ազատեցա Սիրլայի մեջ ինկա: Արփիարը գլխուս երկրորդ Յանեսքո մը եղավ, անոր շափ անտանելի:

Վիեննա գոնե արսենթի տեղ գարեջուր կը խմեի, հոս արսենթի տեղ կաթով թե՛ կը խմեցնե ինքն ինքն: Հոն ստիպված էի օրը ինը ժամ նստած գոնելու, հոս օրը ինը ժամ կը քալեմ կոր: Բարեբախտաբար Լեոնը կա հոս...»: Այս նամակից իմանում ենք, որ Հ. Աբելյանը Փարիզում ծանոթանալով Օտյանի հետ, հանձնարարել էր նրան գրել մի «թատերախաղ», խոստանալով 250 ուրլի: Խոսելով իր գրական ծրագրերի մասին, նա ավելացնում է. «Նախ կուզեմ գրել և լմնցնել թատերախաղ՝ որուն համար 250 ուրլի խոստացավ, ինչպես գիտես, Աբելյանը Հետո պիտի ջանամ ժամ առաջ անգլերեն սովորել և որե՛ղ գրադում մը գտնալ»¹⁵:

¹⁴ Փարիզի շարաթաթերթից, որին աշխատակցում էր Չոպանյանը:

¹⁵ Աբելյանի արխիվում այդ կապակցությամբ որևէ հիշատակության չհանդիպեցինք:

Հաջորդ նամակում նա խոսում է անգլերենի իր զբաղմունքների մասին. «Այս օրերս խենթի պես անգլերեն սովորելու տված եմ ինքզինքս և եթե Արփիարն ու Հևոնը ետևես չիյնան (մանավանդ գրաշարը) նոր կյանքին ալ բան մը չպիտի գրեմ» (1899 թ. դեկտեմբերի 30-ի նամակը)։

Օտյանի կյանքի լոնդոնյան շրջանը ուշագրավ է մի շարք կողմերով։ Նույն այդ ժամանակ հնարավորություն է ստանում մոտիկից շփվելու բանվոր դասակարգի հետ և հաստատուն կերպով ուրք դնելու քաղաքական երգիծանքի ասպարեզը։ Լոնդոնում ապրում էր այրի Աննա Բաֆֆին՝ ծրկու որդիների՝ Արամի և Արշակի հետ, որոնք ուսանողներ էին։ Ինչպես երևում է Օտյանի հիշողություններից, նա, ի. Բաշալյանը, Աննան և մի քանի ուսանողներ կազմակերպում են Լոնդոնի հայ գործավորների և ուսանողների միություն։ Շաբաթը մեկ անգամ միության անդամները, ինչպես և կողմնակի մարդիկ հավաքվում էին միության հավաքատեղում և զանազան խնդիրների շուրջ զեկուցումներ կամ դասախոսություններ լսում։ Օտյանը միության գործադիր կոմիտեի անդամ էր և նրա համար մի քանի դասախոսություններ է կարդացել։

Վերահիշյալ նամակում այդ առթիվ նա գրում է. «...Ժամանակի մը ի վեր, շաբաթ գիշերները, գործաւորաց և ուսանողաց միության երեկույթներուն կերթանք. Հևոնը և ես մեկ մեկ բանախոսություն րրինք։ Անցած շաբաթ նոր ընտրություն կատարվեցավ և Հևոնն ու զիս գործադիր ժողովի անդամ ընտրեցին։ Գեշ չէ, բավական կանոնավոր բան մըն է, մանավանդ անդամներու տրամադրության տակ եղած սրահները շատ շնորհքով են և Բարիզի ուսանողաց ակումբին ծակերուն չեն նմանիր։ Ասկի գատ, այստեղի երեկույթներուն, շատ ավելի բազմություն կըլլա կոր և կիներ ու օրիորդներ ալ կը կգտնվին» (1899 թ. դեկտ. 30-ի նամակը)։

22 հունվարի 1900 թվակիր նամակում Օտյանը նորից է անդրադառնում միության աշխատանքներին. «Երեկ գիշեր ծնունդի տոնին առթիվ փայլուն հանդես մը տրվեցավ Լոնդոնի ուսանողներու և գործավորներու սրահին մեջ, ուր 80-ի չափ կիներ ու օրիորդներ, պարոններ հավաքված էին»։

Այդ ժամանակ արդեն լույս էին տեսել «Հեղափոխության մակաբույծները» քաղաքական-սատիրական պատմվածքների շարքը, որի մեջ առաջին անգամ հասարակությանը ներկայացվում էին հայ ազգայնական արկածախնդիր քաղաքական գործիչների սատիրական կերպարները։ Դրանք այնքան ճշգրիտ կերպով էին պատկերված, որ շատերը իրենց ճանաչելով, «ստորջրյա» կատաղի պայքար էին սկսել Օտյանի դեմ։ Դրանցից մեկը հենց Մինաս Զերազն էր, «Հակահեղափոխականը» պատմվածքի պ. Միսաքը։ Զգալով Օտյանի իրավացիությունը, Զերազը Փարիզում դիմել էր վարկաբեկման մեթոդին և Օտյանի հասցեին մի քանի զրպարտություններ էր տարածել։ Լսելով այդ մասին, Օտյանը Լոնդոնից նրան մենամարտի էր հրավիրել։ «Միանգամայն ընդմիջտ կուգեմ օրինակելի պատիժ մը տալ դժբախտաբար մեր մեջ այնքան բազմաթիվ աղտոտ զրպարտիչներու ոհմակին։ Տեսակ մը հանրային բարոյականի մաքրության դործ մը. որ դոնե քիչ մը օգտակարություն ունենա» (26 հունվար, 1900 թ.)։ Այսպիսի նշանակություն էր տալիս Օտյանը իր մենամարտին։

Մենամարտը տեղի չի ունենում, որովհետև Զերազը հայտարարում է, որ Օտյանի մասին հղած զրպարտության հեղինակը ինքը չի եղել, այլ թուրքական լրտես Բոթինզոնը, որին շուտով լրտեսական գործունեության համար Փարիզից վտարում են։

Օտյանի վերջին երկու նամակները գրված են 19 տարվա ընդմիջումից հետո։ 1900 թ. մինչև 1919 թ. շատ ջրեր էին հոսել։ Ինչպես ասացինք Օտյանը 1901 թ. ընդհարվել էր Զոպանյանի հետ։ Իր «Ազատ խոսքում» նա սուր ծաղրի էր ենթարկել վերջինիս։ Զոպանյանը ևս երբեմն-երբեմն հարվածում էր նրան, սակայն ինչպես ասված է, «հին բարեկամները չեն կարող թշնամիներ դառնալ»։ Հետագայում վերականգնվել էր նրանց բարեկամությունը։ 1915 թ. Օտյանը ևս արտորվել էր արաբական անապատները, հասել մինչև Տեր Զոր, էլպուսերա։ Նրա կյանքը ևս իր բախտակից միլիոնավոր հայերի հետ միասին պատահականություններից էր կախված։ Բարձրախտաբար նա չէր զոհվել։ 1918 թ. վերջերին վերադառնալով Պոլիս իր գոյության մասին հիշեցնում է Զոպանյանին, որը շարունակում էր մնալ Փարիզում և «Անահիտը» հրատարակել։ «Ողջ եմ,— գրում է Օտյանը, նույն թվականի հունվարի 23-ի նամակում,— երեք ու կես տարվան ահելի, աներևակայելի ողիսականն մը ետքը։ Նա դիտակցում էր, որ իր առաջին պարտքը պիտի լիներ գրել այդ ողիսականի մասին։ Զեմ գիտեր, թե պիտի կրնամ պետք եղածին պես պատմել տեսածներս, բայց պիտի փորձեմ։ Ընդարձակ աշխատություն մը պիտի ըլլա ասիկա, թերևս մեկ քանի հատոր»։ Ակնարկված աշխատությունը Օտյանի «Թիվ 17 խաֆին» վեպն է, որը նրա ամենածավալուն գործն է (4 հատոր) և գրել է հենց այդ տարում։

Նույն նամակի մեջ Օտյանը անդրադառնալով պոլսահայ դրական կյանքին, գրում է. «...»

դրական հրապարակին վրա ամայությունն է, որ կը տիրե, կամ ավելի գեշ բան մը՝ մեռելությունը: Գերեզմանապահի զգայնություն ունիմ:

Թուրք բարբարոսները իրենց գործը տեսել էին: Զարդերին զոհ էին գնացել Դ. Վարուժանը, Լիամանթուն, Ռ. Զարդարյանը, Ռ. Սեակը, Գր. Զոհրապը, Երուխանը, Թլկատինցին, Թուրքահայ դրեթե ողջ մտավորականությունը: Նշանավոր գրողներից կենդանի էր մնացել միայն Օտյանը, որը իրոք գերեզմանապահի զգայնությունը պիտի ունենար: Սակայն նա չէր վհատվի, վստահ էր հայ ժողովրդի ստեղծագործական ուժերի վրա:

Օտյանի և Զոպանյանի վերահաստատվող բարեկամության հիմքը մասամբ և այն էր, որ Դրանք երկուսն էլ պայքարիլով դաշնակցության դեմ, ամեն կերպ պաշտպանում էին սովետական իշխանությունը, գորգուրանքով ու սիրով էին վերաբերվում մոխիրներից հառնող Սովետական Հայաստանին, հայության նոր հայրենիքին: Օտյանը այդ ժամանակ հանդես էր գալիս «Պուլ-շեիկ» կեղծանվան տակ և իր խմբագրած «Շավիղ» թերթի ճակատին զետեղում էր «Գործավոր-նե ր բոլոր երկրներու, միացե՛ք» լոզունգը: Երբ Զոպանյանը 1921 թ. գրեց. «Մեր անկախ հայ-լենիքը Հայաստանի մեջ է, և սակայն անոնք, որոնք կսին թի Հայաստան ապագա շունի, անսկզբի և սրբապիղծ տխմարություն մը կը գործեն», Օտյանը մեջ բերելով այդ խոսքերը, լիովին համամիտ լինելով դրան, ավելացնում է. «Պ. Զոպանյանի այս հավատամքը պետք է ամեն ճշմարիտ հայու հավատամքը ըլլա»¹⁶:

Այս նամակները խոսում են ոչ միայն Օտյանի, այլև Զոպանյանի մասին, իբրև մի մարդու, որը 1890-ական թվականներից ապրելով տարագրության մեջ, իր կյանքի զիսավոր խնդիրն էր դարձրել նվրոպային ծանոթացնել հայ ժողովրդի հետ, բացահայտել վերջինիս մշակութային խոշոր դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, հերքել նրա մասին եղած թյուր կարծիքները և դրդել նվրոպացիներին իրենց մարդասիրական պարտքը կատարելու հայության հանդեպ:

Դրանք գաղափար են տալիս նաև կյանքի: Այն դժնդակ պայմանների մասին, որոնց մեջ ապրում ու ստեղծագործում էին տարագրության դատապարտված արևմտահայ գրողները:

А. М. МАКАРЯН

ПИСЬМА Е. ОТЯНА К А. ЧОБАНЯНУ

Р е з ю м е

Переписка Е. Отяна с А. Чобаняном (1896—1900 гг. и 1919 г.) представляет значительный интерес и имеет историко-социальное, политическое и биографическое значение.

Письма Отяна свидетельствуют о его постоянной и неразрывной связи с народом.

Тесно связывая освобождение западных армян с совместной борьбой других угнетенных Турцией народов, он отвергает реакционную сущность дашнакской партии как руководителя освободительного движения армян, стремится повести народ по пути национального освобождения, не допустить его стать жертвой дипломатических махинаций великих держав.

В 1896—97 гг. Отян был воодушевлен идеей революционного содействия армянского и греческого народов и проделал в этом направлении заметную работу. Он связывал большие надежды с восстанием греков на острове Крит.

Письма Отяна приводят к выводу, что национально-освободительное движение армян воодушевляло греков и являлось стимулом для развития демократического движения в Турции.

Письма освещают новые стороны его биографии, дают ценные сведения о некоторых важных этапах жизни великого армянского писателя. Его жизнь в Афинах, на плантациях Шарапаса, в Вене, Лондоне, а также годы ссылки (1915—1918 гг.) говорят о тяжелой доле западноармянского писателя, вынужденного находиться в эмиграции.

¹⁶ Տե՛ս ն. Օ տյ ա ն, Երգիծական տարեցույց. 1921 թ.: